


**Մալաթիա-Սեփաստիա թաղային համայնքի առանձին
տարածքի գոտիավորման նախագիծ
*Ներկայացվում է համառոտ***



Երևանի գլխավոր հատակագծի նախագծի իրագործման հետ կապված՝ թաղային համայնքի առանձին տարածքում նախատեսվում է որոշակի վերակառուցում: Դրա մի մասը կապված է ճանապարհային ցանցի զարգացման հետ և առաջացնում է արմատական վերափոխումներ և կառուցապատման տեղահանում, մյուս մասը պայմանավորված է սակավահարկ բնակելի թաղամասերն արդիականացնելու, փողոցային ցանցը և կարմիր գծերը կարգավորելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև Եռաբլուրի սանիտարապաշտպանիչ սահմանափակումների առաջադրած պայմաններով:



Երևանի գլխավոր հատակագծի (այսուհետ՝ ԵԳՀ) նախագծին համապատասխան՝ Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի տարածքով նախատեսվում է Կենտրոն թաղային համայնքից դեպի Երևանի արևմտյան ավտոմայրուղային շրջանցում (իրագործվելու է հեռանկարում), շառավղային ուղղվածության արագընթաց 3 ավտոմայրուղիների կառուցում: Առաջինն ուղղվելու է Մարգահամերգային համալիրից Տիգինայի փողոցին հարող տարածք և հատելու է Աջափնյակ թաղային համայնքի տարածքները: Երկրորդն ուղղվելու է <<Կիլիկիա>> թաղամասից դեպի <<Մարս>> գործարանին հարող տարածք՝ անցնելով Մալաթիա-Սեբաստիայի կենտրոնով Երևանի Հարավ-արևմտյան <<Ա>> և <<Բ>> թաղամասերի մանրամասն հատակագծման նախագծերին համապատասխան: Արագընթաց 3-րդ ավտոմայրուղին միացնելու է առաջինն ու երկրորդը. անցնելու է Դալմայի այգիների միջով:



Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի տարածքում ԵԳՀ-ով առաջադրված է քաղաքի ապագա ճանապարհային ցանցի զարգացման պահանջներով հիմնավորված նոր համաքաղաքային նշանակության, արդի տեխնիկական պահանջները բավարարող, անընդմեջ երթևեկության մայրուղիների կառուցում: Համաքաղաքային նշանակության արագընթաց մայրուղիների հետագծերը Կենտրոն և Արաբկիր թաղային համայնքներից ուղղվելու են դեպի քաղաքի արևմտյան շրջանցող արագընթաց ավտոմայրուղի, որը նախատեսված է հեռանկարում: Այս մայրուղիների շինարարությունը պարտադրում է գոյություն ունեցող կառուցապատման, հիմնականում սակավահարկ բնակելի ֆոնդի իրացում:

Մալաթիա-Սեբաստիա և Աջափնյակ թաղային համայնքների սահմանով նախատեսվող մայրուղին հարակից թաղամասերի նկատմամբ ունենալու է տարանցիկ բնույթ: Ի տարբերություն դրա՝ Կիլիկիայից դեպի արևմուտք ուղղվող մայրուղին, անցնելով Մալաթիայի կենտրոնով, հատակագծային, տրանսպորտային և կառուցապատման նկատմամբ էական վերափոխումներ է առաջադրում: Մայրուղին, ունենալով անընդմեջ երթևեկության կարգավիճակ, սերտ շաղկապված է լինելու հարակից քաղաքային և տեղական նշանակության փողոցների և հարակից կառուցապատմանը՝ օգտագործելով գոյություն ունեցող փողոցները:

Համայնքի առանձին տարածքում նախատեսվում է ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքը 76.1 հա-ից հասցնել 93 հա-ի: Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կկազմի 273.0 հա՝ 203.4 հա-ի դիմաց, իսկ հատուկ նշանակության կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը կհասնի 254.0 հա-ի, այդ թվում՝ փողոցների և մայրուղիների կանաչապատման հաշվին:



Կանաչապատման համար կօգտագործվեն զարդարուն և պտղատու ծառեր, թփեր, ինչպես նաև բաղեղներ ուղղաձիգ կանաչապատման համար: Անտառպուրակներ հիմնադրելու համար կօգտագործվեն մի քանի հիմնական անտառաստեղծ ծառատեսակներ և թփեր: Նախատեսված են ինչպես ընդհանուր օգտագործման, այնպես էլ գործառույթային նշանակության կանաչ տարածքներ: Հատուկ տեղ է հատկացված ներբակային կանաչապատմանը, ճամփեզրերի, կրթօջախների շրջակայքի և հասարակական այլ վայրերում ծառատունկին և կանաչապատմանը: